

«ԱՊՏԱԿ» ՀԱՆԴԵՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՂԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայ պարբերական մամուլի նկարչության պատմության մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում «Ապտակ» երգիծական-քաղաքական հանդեսի (1894—1897) ծաղրանկարները: «Ապտակը» սկզբում լույս է տեսել Աթենքում, ապա՝ Լոնդոնում: Հնչական կուսակցության այս օրգանն իր առաջ խնդիր էր դրել ղեկավարելու՝ հեղափոխությանը, պայքարել Արևմտյան Հայաստանը թուրքական բռնակալական իշխանությունից ազատագրելու համար: Հենց առաջին համարներից մեկում՝ 1894 թ. ապրիլին (Ձ 2) հանդեսը գրում է. «Ապտակը» հրատարակելով մենք ուզում ենք հայ հեղափոխական գործող մարմնին տալ մի նոր ղեկ՝ երգիծաբանի ապտակը: Այդ Ապտակը՝ թաթախված հայ քաղերի արյունով, պետք է հարվածի այն ամենին, թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակ են հայտնվում նաև հայ ժողովրդի բազմության՝ աշխատավորի, գեղջուկի և բանվորի շահերին:

«Ապտակը» պետք է ղեկավարվի այն վսեմ գաղափարներով, որոնք ժամանակին ամենաառաջադեմ գաղափարներն են հանդիսանում հանրամարդկային առաջադիմության մեջ, գաղափարներ, որոնք արդեն փայլուն կերպով հայտարարված են հեղափոխական ասպարեզի վրա և հայ հեղափոխականների գործերով ու արյունով արձանագրված են հնչական դրոշի վրա:

«Ապտակի» լեզուն կլինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված և խիստ իր հարվածի տակ նա կդնի ամեն հասարակական հիմնարկություն և հասարակական անձինք, որ հայ հեղափոխական առողջ գաղափարին և ժողովրդի շահերին վնասակար են: «Ապտակի» բոլոր համարներում միշտ կգետնվեն նկարներ քաղաքական պարունակությամբ:

Այսպիսով, «Հայ հեղափոխական գործող մարմնին տալով մի նոր ղեկ»՝ երգիծաբանի ապտակը, հանդեսը պարբերաբար հրապարակում է երգիծական բնույթի դրական ու նկարչական նյութեր, հատկապես ծաղրանկարներ:

Ուշագրավ են 1894 թ. 2-րդ և 3-րդ համարներում հրապարակված ծաղրանկարները: Առաջինը պատկերում է սովյալ հայերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների բողոքի ցույցը և գետնին ընկած մի մարդ, իսկ դիմացում՝ թուրք զինվորներ, հրացաններն ուղղած նրանց վրա: Նկարի տակ գրված է. սուլթան Համիդը «Հավատացնում է, թե գավառներում տիրում է կատարյալ խաղաղություն և բարեկեցություն»: Երկրորդ նկարը պատկերում է,

թե ինչպես արևածագին քանդորը ջախսվելով ավելում է գետինը, ուր վխտում են մանր, անպիտան մարդիկ, որոնց մրա գրված է՝ «Կեղծ գործիչ», «պարտաւսեր», «վաճակաճ», «տուրք», «կեղծություն», «Բ. Դուրը», «միապետություն» և այլն: Նկարի տակի երկտողը բացատրում է դրա իմաստը. «Հայաստանի աշխատավորը ցախավելով մաքրում է իր երկրի հոտած աղբը» (նկ. 1):



Նկ. 1

1894 թ. օգոստոսյան համարում «Ապտակը» հրատարակում է «Պատմության դատաստանը և Թուրքիան» ծաղրանկարը, որն ազդարարում է Թուրքիայի մոտալուտ կործանումը: Հրացանների սվինների ծայրերին պառկած է մի մարդ՝ «Թուրքիան»: Երեք հրացանակիր մարդ պատրաստ են նրան խոցելու համար: Մարդկանց տաբատներին գրված է՝ «Կրետա», «Մակեդոնիա», «Հայաստան», «Դարձյալ մեկ-երկու հարված և նա կանչվանա», կարդում ենք նկարի տակ: Այստեղ հստակորեն կարգացվում են հրացաններին գրված ռուղարիա, «Եգիպտոս», «Ռումինիա», «Հունաստան», «Սերբիա» անունները, այսինքն Թուրքիայի կողմից ճնշված այն երկրները, որոնք գնք են վերցրել նրան ոչնչացնելու համար: Ահա այդ է լինելու «Պատմության դատաստանը», հուշում է ծաղրանկարը:

Այս և նմանօրինակ քաղաքական սուր դրական ու նկարչական երգիծանքը գրգռում էր թուրքական կառավարությանը, որը, ինչպես վկայում է թերթը, «անընդհատ դիմում է հելլեն կառավարության մեղ Հունաստանից աքսորելու պահանջով»: Սուլթանի գործակալներն

ամեն կերպ խանգարում էին թերթի աշխատողներին, գողություն էին անում տպարանում և կոսակցության կենտրոնի շենքում, խմբադրության անդամների կյանքի գնա մահափորձեր կազմակերպում։ «Այդ խոչընդոտների դեմ,—գրում է թերթը,—մենք մաքառեցինք զրեթե ամրողը երեք տարի։ ...Թող վստահ լինեն,—ավելացնում է խմբագրականը,—որ ոչ մի թուրքական հալածանք, որքան էլ խիստ լինի, երբեք չի կարող մեզ արգելք լինել բախտը հաղթար, անձնվիրություն ու եռանդով միշտ կատարելու մեզ հանձնած և մեր ստանձնած ծանր ու պատասխանատու, բայց և քաղցր ու սուր պարտականությունները։

Ստիպված լինելով տպարանը և խմբագրությունը Աթենքից տեղափոխել Լոնդոն, «Ապտակը» հրապարակում է Մասունի հերոսական պաշտպանության թեմայով մի մեծ, հանգստի ամրող էջը՝ զրադեցնող ծաղրանկար։ «Սասուն» բարձր լեռան գագաթին ծածանվում է հայոց դրոշմ, որի վրա գրված է՝ «Աղատություն կամ մահ»։ Ժայռի տակ՝ ներքևում, երեւում են թուրքական բանակի հրացանակիր դինդորներ, հրանոթ և թուրք գնեթալը, որը կանգնել է շվարած... «Պայթում են հրանոթները և փոթորիկը վրան,—գրում է թերթը,—բայց նա՛ Սասունը, հպարտ կանգնած է վեհ, անընկճելի...»։

Իսկապես, ծիծաղաշարժ է Զեքի փաշայի և նրա հրամանատարությունից գործող թուրքական կանոնավոր զորքերի ողբացյալ վիճակը։ Հսկա բանակով, նորագույն զենք ու զրահով զինված նրանք երկար ժամանակ չեն կարողանում նվաճել հայոց անառիկ բերդը։ Մասունցիների հերոսական պաշտպանությունը, որին մասնակցել են նաև կանայք, երեխաներ և ծերունիներ, ժամանակին ոգևորել է հայ ժողովրդին, հիացմունք պատճառել օտարերկրացի ականա-տեսներին և ստեղծագործական աղբյուր ծառայել ոչ միայն նկարչության, այլև երաժշտության ու գեղարվեստական գրականության բնաղավառում։ Վերահիշյալ ծաղրանկարը այդ ոգեշնչման օրինակ է թերթային-ամսագրային գրաֆիկական նկարչության հանդեպ։

«Ապտակը» համարում (№ 8) հրապարակված «Թուրքիան և Հայկական հեղափոխությունը» մեծածավալ նկարը պատկերում է սուլթան Համիդին արևելյան ձեռով ծալապատիկ նստած և նրա գլխի վրա՝ վերևից, կախված դաժնության սուրբ, որի վրա գրված է «Հայկական հարց»։ Մի ձեռք («Հնչակյան») մկրտով փորձում է կտրել կախված թուրք չեղում՝ երկրորդ պլանում, երևում են այրվող հայկական գյուղերի թուրք զինվորների շարքերը։

Հայերի կտրած գլուխները սվիններին ծայրերին դրած։ Նկարի տակ գրված է. Հիվանդ մարդ (Համիդ)։ Հայերին ես կոտորում, բայց հեղափոխության դամոկլյան սուրբ և քաղցր դիակները քո մահից են պատրաստում։

1895 թ. առաջին վեց ամիսներին «Ապտակը» հրապարակում է ավելի քան 12 ծաղրանկար, որոնցից գեղարվեստական և հասարակական մաքի պատմության տեսակետից առավել հետաքրքրություն են ներկայացնում «Երեւանի վաճառիկ», «Ներկան», «Արյան մեջ», «Համիդի գլուխը գրաֆիկական ստեղծագործությունները, «Կոմիտասի» պատկերում է կտր սեղանի շուրջը նստած եվրոպական շոքս պետությունների ղեկավարներին քարտ խաղալիս։ Սեղանի կողմից գրված է «Հայկական խընդիր»։ Մի խեղճ հայ դիտում է նրանց խաղը։ Անգլիացին սեղանին դրել է խաղաթուղթի աղաղակաբար և մատը վրան դրած ուրախ ծիծաղում է, թուրքը խաղաքարտերը ձեռքին մտածում է, իսկ ռուսը և ֆրանսիացին հանգիստ դիտում են։ Նկարի տակ գրված է հայի խոսքը. «Եթե մեկ ա՛ս» էլ դարեն, հայկական խընդիրը լուծում կստանա։ Թերթն այնչեղ տեղափոխում է. «Որքա՛ն խեղճին խաբեցին, բայց նա դարձյալ հույս ունի» (նկ. 2)։

Հայ ժողովրդի ազատագրության հարցում եվրոպական մեծ տերությունների անտարբերությունը, որը փաստորեն նպաստել է թուրքական կառավարության սանձարձակությանը, «Ապտակը» արտահայտել է մի քանի այլ ծաղրանկարներում ևս։ Այդպիսին է, օրինակ, «Ներկան»։ Թուրքերը հայ կանանց և տղամարդկանց կտրած գլուխները շարքով բերում լցնում են մի մեծ տակառի մեջ, իսկ սուլթան Համիդը («Թուրքիան») այդ տակառում, ինչպես գրում է թերթը, «իրան համար ապուր է եփում մեր արյունից և մսից»։ Մինչդեռ եվրոպական «բարեկամ» տերություններն անուշ քնով են անցած մեր նկատմամբ։ Մաղաքակարամ այդ տերությունների ղեկավարները պատկերված են ամպերի մեջ աչքերը փակ, քնած։ Այս ողբերգական տեսարանի մեջ նկարչը, սակայն, մոռնել է հույսի ու լավատեսության զաղափարը։ Նկարի երկրորդ պլանում երևացող «Զեքի» բարձր սարը ծայրեր է և հրաբուխի խառնարանից դուրս է եկել դամոկլյան ուրբ, որի վրա գրված է՝ «Կենցեղ. ապստամբությունը»։ Եթե հրաբուխը...—կարդում ենք նկարի տակ,—նա միշտ կրակվում է։

Ժողովրդական ապստամբության հրաբուխի զաղափարը, որը վերջի վերջո մահ է բերելու թուրքական վանդալիզմին, յուրովի արտահայտություն է գտել նաև «Համիդի» ողբազգեթ

ժաղրանկարում (1895. № 3), Հայոց ամբողջ ժողովրդի մոտով անցնում են թուրքական իշխանավոր զորազինվոր երկար նիզակների ծայրերին հայերի կտրած գլուխները տնկած: Շքերթն ընդունում են Շեքի փաշան և Համիդը: Դա տոնական-հանդիսավոր օր է նրանց



Նկ. 2

Համար: Նկարի տակ գրված է. «Բարենորոգիչները Հայաստանի կամքովն սուլթանի: Նկարը ծաղրում է Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կատարած այդօրինակ բարենորոգումները և դատապարտելով այդ վանդալային շքերթն ու զրա կազմակերպիչներին, նրանց գլխի վերևում պատկերել է օդի մեջ սավառնող մահվան ուրվականը (Նկ. 3):

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս, ինչպես և նախորդ և մի շարք այլ ծաղրանկարներում, նկարիչը պատկերելով արևմտահայ ողբերգական իրականությունը, միաժամանակ հույսի և փրկության տարր է մտցնում իր ստեղծագործություններում: Այդ լավատեսական զգացումը, սակայն, սոսկ նկարչի անհատական միտումը չէր, այլ «Ապտակի» խմբագրության և ընդհանրապես հնչական կուսակցության հավատի արտահայտությունն էր: Մեր օրերի մարդու համար ոռոմանտիկ թվացող այդ հավատը և լավատեսությունը ժամանակակիցների համար ունի իրողություն էր՝ մոտիկ ապագայում լուծվող հարց, որն իր պատկերավոր արտահայտ-

ությունն է գտնում նաև 1895 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին ստեղծված «Փոթորիկը պայթեցավ... կեցցե՛ ապստամբությունը» և մանավանդ «Քաղաքացիան ներկա թուպեն» ծաղրանկարներում: Երկու մասից բաղկացած առաջին նկարում, որը տպվել է հանդեսի երկու էջի վրա, աստվերվում է շղթայակապ «Հայաստան» լեռնաշխարհը և մի դարբին (սինչակ): Որը ծանրակշիռ մուրձով խփում է շղթային այն կտրելու համար, իսկ մյուս մասում՝ վերևում, մի հայ երիտասարդ (սինչակյան) հպարտ ու հաստատ առաջ է դնում ձեռքին բարձր բռնած հայկական դրոշմը, որի վրա գրված է «Ազատություն», իր հետևից տանելով հայոց զորազինվորը:



Նկ. 3

«Քաղաքական ներկա թուպեն» եռաֆիգուր գրաֆիկական կոմպոզիցիայի առաջին պլանում պատկերված է Կարլ Մարքսը, որը գետնին փորված հորի մեջ է սեղմում երկու ձեռքերը վեր պարզած սուլթան Համիդի դիմադծերը հիշեցնող շքանշանակիր մի թուրքի («Թուրքիա»): Քլունգը ձեռքին հեռվում կանգնած բանվորը՝ «Հայ հեղափոխականը», ինչպես գրված է նկարի տակ, ասում է անզլիացուն. «Հորը փորեր եմ, թաղելու էլ քեզ կօգնեմ»: Մաղրանկարը կարծում ենք, մեկնաբանության կարիք չի զգում: Այստեղ ուղադրություն է գրավում Կարլ Մարքսի դեմքի կատարյալ նմանությունը՝ նրա դիմանկարային լուծումը, դա Կարլ Մարքսի առաջին դիմանկարներից մեկն է հայ իրականության մեջ, թերևս միակը XIX դարի պարբերական մամուլի էջերում: Երգիծականը միայն գլխի համեմատությամբ նրա մարմնի և ոտքերի փոքրության մեջ է, որը սակայն չի ընդգծված:

Սուլթանական Թուրքիայի բռնապետության տապալմանը՝ նրա «թաղմանը», Կարլ Մարքսի անմիջական մասնակցության այդօրինակ ցուցադրումը, որը, իհարկե, «Ապտակի» Լրագրանքի արտահայտությունն էր, ինքնին վկայում է, որ հանդեսի հրատարակիչները, ինչպես և շատ այլ հնչակյաններ, մարքսիզմի հետևորդներ են՝ հեղափոխականներ, որոնք ծրագրել են հեղափոխականորեն, արմատապես փոխել Արևմտյան Հայաստանի հասարակական կարգը, թաղել բռնապետությունը, և հաստատել սոցիալիստական կարգը:

Հանդեսը հավատացած էր, որ իր առաջադրած խնդիրները մոտ ապագայում իրագործվելու էին: Այդ համոզմամբ էլ նա հրապարակում է «Արյան մեջ» գունավոր մատիտանկարը (վիմագրություն), որը պատկերում է արյան լճում մեկը՝ «Թուրքիան», ձեռքերը վեր պարզած խեղդվում է, իսկ նրա դիմաց՝ նույն արյան միջից ծնվում է ազատագրված Հայաստանը՝ ծածանվող հաղթանակի զրոշը ձեռքին հպարտորեն բռնած հայ աշխատավորի կերպարանքով (նկ. 4): Նույն արտահայտիչ է և «Վամպիր» ծաղրանկարը, որը պատկերում է հրեշի նախաստանը և «Հոնաստանը» ոտքերի տակ գցած, իսկ «Ծվրուպան»՝ հանգիստ դիտելիս...

«Ապտակի» ծաղրանկարները որոշակի ցույց են տալիս 1890-ական թթ. կեսերին հայ իրականության մեջ տեղի ունեցած քաղաքական և գաղափարական պայթյունում նկարիչների անմիջական մասնակցությունը: Այդ ծաղրանկարները, միաժամանակ, մեղադրական դատավճիռներ են սուլթանական Թուրքիայի նկատմամբ:

Հայրենիքից դուրս՝ Աթենքում և Լոնդոնում, հրատարակված այդ պարբերականին աշխատակցել են հայ և օտարազգի մի քանի նկարիչներ: Նրանցից մեկ հայտնի է երկուսի անունը: Մեկը իր ծաղրանկարների տակ անգլերեն Ֆրից Fritz է ստորագրել, որը հավանաբար կեղծանուն է կամ մեկ անծանոթ արվեստագետ, մյուսը եղել է հայ նկարիչ Չարլզ Կորմիկը՝ մի նոր անուն 1890-ական թթ. ազգային արվեստագետների շարքում: Թեև նրանք չեն փայլում իրենց բարձրարվեստ ստեղծագործություններով, սակայն գեղարվեստական արտահայտչականության համեստ միջոցներով, բայց սուր դիտողականությամբ ստեղծված քաղաքական բարդ ու բազմազան թեմաներով այդ

ծաղրանկարներն իրենց համոզականությամբ ժամանակին կատարել են պատկերավոր պոպուլյարիզացի՝ ժողովրդական մասսաներին հեղափոխականացնող դեր և շեղում ընդունելություն են դրել հայ հասարակության լայն խավերում: «Ապտակը» 1895 թ. հունիսյան համարում



(Ն 2) «Մեր նկարիչը» վերնագրով հոգնածում տալիս է հետևյալ տեղեկությունը. «Ապտակի» մի քանի վերջին համարների և մանավանդ նախորդ համարի նկարները մեծ տպավորություն են թողել հայ հասարակության վրա, և այդ առիթով շատ տեղերից ստանում ենք քաղաքական նամակներ, ըստ որում հայերի մեջ առաջին փորձն է քաղաքական ծաղրանկարների... Օգտվելով հասարակության այդ հետաքրքրությունից, մենք հարկ ենք համարում հայտնել, որ «Ապտակի» նկարները պատրաստում է մի տաղանդավոր հայ նկարիչ՝ Չարլս Կորմիկ, որի հայրը պարսից շահի պալատական բժշկապետն էր և որի պապը՝ մոր կողմից, հայտնի Դավիթ խան Մազինովն էր, պարսից հռչակավոր զորապետ և նահանգապետ Մպահանի ընդհանուր նահանգի Պարսկաստանում:

Մ. Ս. ՄԱՐԿՍՅԱՆ